Հայաստանի
Հանրապետության
կենտրոնական բանկ



ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ

30.01.24

Այսօրվա նիստում ՀՀ ԿԲ խորհուրդը որոշեց

վերաֆինանսավորման տոկոսադրույքը նվազեցնել 0.5 տոկոսային կետով՝ սահմանելով 8.75%

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրամադրվող **լոմբարդային ռեպոյի** տոկոսադրույքը՝ **10.25%**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկերից **ներգրավվող միջոցների** տոկոսադրույքը՝ 7**.25%**

2023 թ. դեկտեմբերին 12-ամսյա գնաճը նվազել է՝ ամսվա վերջին կազմելով -0.6%: 12-ամսյա բնականոն գնաճը ևս նվազել է՝ կազմելով -0.4%:

Նպաստումը գնաճին (տոկոսային կետ)



Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական կոմիտե, Կենտրոնական բանկ

Արտաքին հատվածից ՀՀ տնտեսության վրա ակնկալվում են թույլ գնանկումային ազդեցություններ:

Միջազգային ապրանքահումքային շուկաներում գնաճային միջավայրը մեղմվում է և համաշխարհային գնաճը որոշակիորեն դանդաղում է: 2024 թ-ի սկզբին, Մերձավոր Արևելքում աշխարհաքաղաքական զարգացումների սրմամբ պայմանավորված՝ արձանագրվել է էներգակիրների գների որոշակի աճ և ձևավորվել են առաջարկի արժեշղթաների խաթարման ռիսկեր: Նման իրավիճակում առաջատար երկրների կենտրոնական բանկերն առաջիկայում աստիճանաբար կթուլացնեն զսպող դրամավարկային պայմանները:

Գնաճը գործընկեր երկրներում և ՀՀ-ում, %



Աղբյուրը՝ Երկրների կենտրոնական բանկեր

Պարենային ապրանքների միջազգային գներ, (2019/12 = 100)



Աղբյուրը՝ www.fao.org

Չորրորդ եռամսյակում Հայաստանի Հանրապետությունում պահպանվել է բարձր տնտեսական ակտիվություն

…որին շարունակել է նպաստել շինարարության և ծառայությունների ճյուղերի բարձր աճը:

Արտաքին պահանջարկը որոշակիորեն դանդաղել է զբոսաշրջության աճի տեմպի նվազման հաշվին: Ներքին պահանջարկը շարունակում է մնալ բարձր՝ հիմնականում արտահայտվելով մասնավոր սպառման բարձր աճով:

Տնտեսական ակտիվություն, հունվար-նոյեմբեր, կուտակային տ/տ աճ, %



Միջազգային զբոսաշրջիկների ներհոսք



Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական կոմիտե, Կենտրոնական բանկի գնահատական

Արտաքին հատվածից թույլ գնանկումային ազդեցությունների և նախորդ տարիներին իրականացված զսպող դրամավարկային քաղաքականության պայմաններում պահպանվում է ցածր գնաճային միջավայր, ինչն արտահայտվում է նաև աշխատանքի շուկայում աշխատավարձերի աճի տեմպի և գնաճային սպասումների որոշակի նվազմամբ:

Մասնավոր հատվածի անվանական աշխատավարձ



Աղբյուրը՝ ՀՀ Վիճակագրության կոմիտե, ՀՀ ԿԲ

Գնաճային սպասումների և անորոշության կշիռը (ԿԲ հարցումներ)



	2021.4	2022.1	2022.2	2022.3	2022.4	2023.1	2023.2	2023.3	2023.4
Բարձր գնաճային սպասումներ	31.2	39.9	32.3	29.2	35.7	27.9	27.5	22.1	21.5
Անորոշություն	40.6	38.2	41.1	40.4	25.4	31.6	41.8	41.8	46.3
Ցածր գնաճային սպասումներ	28.2	21.9	26.6	30.5	38.8	40.5	30.8	36.1	32.2

Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ

ԿԲ ԽՈՐՀՈՒՐԴԸ

... նպատակահարմար է գտնում նվազեցնել քաղաքականության տոկոսադրույքը

... հետևողական է լինելու համարժեք գործողություններով ապահովելու պահանջարկի կարգավորում և գնաճային սպասումների կայունացում

Դրամավարկային քաղաքականության նախանշված սցենարում 12-ամսյա գնաճն առաջիկայում կպահպանվի նպատակային ցուցանիշից ցածր մակարդակում, այնուհետև աստիճանաբար կավելանա և միջնաժամկետում կկայունանա նպատակային 4% ցուցանիշի շուրջ:

ԿԲ Խորհուրդը գնահատում է, որ նախանշված ուղեգծից գնաճի շեղման ռիսկերը հիմնականում հավասարակշռված են: Ռիսկերի որևէ ուղղությամբ դրսևորման պարագայում Խորհուրդը համարժեքորեն կարձագանքի և կապահովի գների կայունության նպատակը:

Հայաստանի
Հանրապետության
կենտրոնական բանկ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ



Տոկոսադրույքի մակարդակի որոշման հիմքում ընկած մանրամասն տեղեկատվությանը կարող եք ծանոթանալ մինչև 2024թ. փետրվարի 13-ը հրապարակվելիք Մամուլի հաղորդագրությունում (Տոկոսադրույքի արձանագրություն)